ՉՈՒՅՑԵՐԻԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ

(Զուիցերիայի 600-ամեայ տօնի առիթով)

ՄԿՐՏ. ՄԱՆՈՒՉԱՐԵԱՆԻ

(Նարուեակութիւն [1])

B. ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ (pouvoir exécutif)

Գործադիր իշխանութիւնը, ինչպէս լիշեցի, պատկանում է դաշնակից խորհրդին (conseil fédéral)։ Մինչ 1848-ը իսկապէս ասած գոյութիւն չունէր կենտրոնական մի մարմին, որը կարելի լինէր գործադիր իշխանութիւն անուանել և ոչ իսկ նա ունէր մշտական բնակատեղի (résidence)։ 1848-ից որոշւում է դաշնակցութեան զլխաւոր և մշտական կենտրոն Բէրն քաղաքը, որը և այդ պատճառով կոչւում է դաշնակցական քաղաք (Bundesstadt)։

Դաշնակից խորհուրդը բաղկանում է 7 անդամներից, որոնց ընտրում է Դաշնակից ժողովը 3 տարի ժամանակով։ Ընտրել կարող են բոլոր քաղաքացիները, որոնք ներկայացուցիչ լինելու իրաւունք ունին։ Ընտրողութիւնը պէտք է կատարւի այնպէս, որ միևնոյն կանտոնից երկու հոգի խորհրդի անդամ չը լինեն։ Դաշնակցական խորհրդի անդամը ոչ մի այլ պաշտօնով պարապել կարող չէ։ Ընտրելուց յետոյ նրանք այլ ևս պարլամէնտին չեն պատկանում. իսկ իրաւունք ունեն ազատ մուտք գործելու պալատները և առաջարկութիւններ անելու։—Դաշնակից խորհուրդը ունի իւր նախագահը և փոխ նախագահը, որոնց ընտրում է պարլամէնտը մի տարի ժամանակով։ Ոչ նախագահը և ոչ փոխ նախագահը կրկին ընտրել չեն կարող (sont élus pour l'année et non reéligibles)։ Նախագահը

---

[1]) Տե՛ս «Մուրճ» № 9։

կրում է դաշնակցութեան նախագահի փաքուն տիտղոսը (président de la confédération). իսկ իրականապէս նա լոկ դաշնակից խորհրդի նախագահ է և վարում է նիստերը և ոչ մի ուրիշ արտօնութիւն կամ իրաւունք չէ վայելում։ Ստանում է միւս անդամներին համահաւասար ռոճիկ։ Դաշնակից խորհուրդը իսկապէս ասած վարչական մի օրգան է և ոչ իշխանութիւն։ Նա կատարեալ ենթարկուած է պարլամէնտին, եթէ կարելի է ասել, իրագործում է պարլամէնտի կամքը, վարելով նորա գործերը։ Հսկում է օրէնքների իրագործման, երկրի ներքին և թէ արտաքին ապահովութեան, կատարում է ֆինանսական, զինուորական և ալ մի քանի նման գործեր, համաձայն պարլամէնտի տուած հրահանգներին և ամեն անգամ, երբ պարլամէնտը հաւաքուած է, նա հաշիւ է ներկայացնում իւր գործավարութեան մասին։

Եթէ պարլամէնտը ցրուած է և վտանգ է սպառնում երկրի խաղաղութեան արտաքուստ թէ ներքուստ, ապա գործադիր իշխանութիւնը, իրաւունք ունի անմիջապէս մինչ 2000 զինուոր կոչել. բայց եթէ կարիք եղաւ հաւաքուած զօրքերը երեք շաբաթից աւելի պահելու և կամ թիւը աւելացնելու 2000-ից, ապա նա անյապաղ պարտաւոր է պարլամէնտը կանչելու, առանց որին մի քայլ անել կարող չէ։

Դաշնակից խորհուրդը բաժանուած է 7 դէպարտամէնտների, որոնցից իւրաքանչիւրը յանձնուած է մի անդամի։ Օրինակ, քաղաքական, ներքին, արդարադատութեան և ոստիկանական, զինուորական, ֆինանսների, վաճառականական ու երկրագործական, պոստ ու երկաթուղիների։ Այդ բաժանմունքը լոկ վարչութեան դիւրութիւն տալու համար է. իսկ ինչ վերաբերում է խորհրդի պատասխանատուութեան, խորհուրդը պատասխանատու է համերաշխաբար (solidairement) (յոդ. 103 Դ. Ս.)։

Ինչպէս նկատում է ընթերցողը, գործադիր իշխանութիւնը ոչ մի անկախութիւն չ'ունի. բայց չը նայած դորան, նա կրում է լոկ պատի կոչումը՝ «Դաշնակցութեան նախագահի» տիտղոսը (président de la confédération). նոյն իսկ նրան, ինչպէս լիշում էք, հաւատ չէ ընծայում զուիցերիացին ու մէկ տարով է ընտրում, այն ես երկրորդ անգամ՝ ընտրելու իրաւունքից զրկելով։

Նորա այդ տեսակ վարմունքը ինչ կերպ կ'ընդունէք, այդ ես չը գիտեմ. միայն չը մոռանանք, որ Բոնապարտը նախ քան կայսր լինելը, ֆրանսիական հանրապետութեան նախագահն էր «իմպէրատոր»-ի (?) տիտղոսով. իսկ Լուի Բոնապարտը, գրեթէ իրագործեց իւր ազգականի ծրագիրը, և երբ 1851-ին պետական հարուածով երդմնազանց եղաւ, ամբողջ մի ազգի իրաւունքները ոտի տակը դնելով, ֆրանսիական հանրապետութեան պետական անձնաւորութիւններից միմիայն լատնի իրաւագէտ Պորտալիսը բացարձակօրէն բողոքեց և պահանջեց, որ պահապանների դատարանին ներկայացնեն ապստամբուած նախագահին, ինչպէս պե-

տական դաւաճանի։ Բայց միայն մի ձայն բաւական չէր ապստամբ նախագահի և մի քանի հարիւր հազար կանոնաւոր զօրքի դէմ։

Ահա ինչու զուիցերիացին մշտական բանակի դէմ է և ինչու նա հաւատք ընծայել չէ սիրում ում և լինի։ Նա սիրում է իւր գործերը ինքը տեսնել և իրաւունք կարծեմ որ ունի, չէ...

C. ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

Դատաստանական իշխանութիւնը, որի կալանը գտանւում է Լոզանում, 1874-ի սահմանադրութիւնով պատկանում է դաշնակից ատեանին (tribunal fédéral)։ Հին կանտոններում միութիւնը միջնորդ դատարան էր միայն ճանաչում, Հելուետական հասարակապետութեան ներքոյ այդ սիստեմը ընկնում է. իսկ 1815-ին նորից երևան է գալիս։ 1848 ից կալ դաշնակից ատեան լոկ հասարակական իրաւունքի համար, այն ևս շատ սահմանափակ իրաւունքներով. իսկ ինչպէս իշխանութիւն, իսկապէս նա գոյութիւն ունի 1874 թուականի լունիսի 27-ի մի օրէնքով։

Մի այլ անգամի թողնելով դատաստանական իշխանութեան փափուկ սկզբունքների հետ ծանօթացնելը, որը խոստանում եմ կատարել մօտիկ ապագայում, մտադիր լինելով խօսել Ամերիկայի դատաստանական կազմակերպութեան մասին, ես այժմ կ'անցնեմ ուղղակի Զուիցերիայ դաշնակից ատեանին։

Դաշնակից ատեանը բաղկանում է 9 անդամներից և 9 փոխանդամներից, որոնց նշանակում է պարլամէնտը 6 տարի ժամանակով։ Անդամներից երկուսը ֆրանսիական, մէկը իտալական, իսկ մնացածները գերմանական կանտոններից են նշանակւում։

Ատեանը ունի իւր նախագահը ու փոխ-նախագահը, որոնց նշանակում է նոյնպէս պարլամէնտը 2 տարի ժամանակով։ Նախագահը կազմում է ատեանը ու հսկում քննիչներին (juges d'instruction) և այլ դատարանական պաշտօնեաներին։ Անդամներից իւրաքանչիւրը ստանում է 10,000 ֆրանկ, իսկ նախագահը 11,000 ֆ. տարեկան։

Ատեանը ունի նոյնպէս 2 քարտուղարներ, որոնք պէտք է գիտենան թէ գերմաներէն և թէ ֆրանսերէն. իսկ գոցանից մէկը կամ միւսը անպատճառ նաև իտալերէն։ Դոքա ստանում են 6—8000 ֆրանկ տարեկան։ Քրէական լանցանքների ատեանը նշանակում է 2 քննիչներ 6 տարի ժամանակով։ Քրէական ատեաններում ամեն անդամ դաշնակից ժողովը նշանակում է մի ընդհանուր պրոկուրոր (procureur général), որը ներկայ է լինում լոկ քրէական գործերի նիստերում։

Որ և իցէ մի վճիռ կայացնելու համար, անհրաժեշտ է ատեանի 7 անդամների ներկայութիւնը։ Գործերը կատարւում են հրապարակաւ և ոչ գոնփակ (huis clos)։ Ատեանի վճիռները գործադրելի են բոլոր

կանոնների համար (Դ. Ս. յոդ.)։ Ատեանի իրաւասութիւնը երեք կարգի է բաժանւում։

I. Քաղաքացիական վէճերում, ինչպէս բարձրագոյն ատեան, վճռում են դաշնակցութեան և կանտոնի կամ կանտոնների մէջ ծագած վէճերը։ Դաշնակցութեան և մասնաւոր անհատի կամ անհատների, կանտոնների իրար մէջ և վերջիններիս ու մասնաւոր անհատի կամ անհատների մէջ տեղի ունեցող վէճերը։

Նորա իրաւասութեանն են ենթարկւում նոյնպէս հաւմաթլողների մէջ տեղի ունեցող հարցերը և բացի այդ՝ ապահարզանի և կրկնամուսնութեան վերաբերեալ խնդիրները և այն։

II. Քրէական յանցանքների համար ատեանը բաժանւած է մեղադրական ատեանի (chambre d'accusation)։ քրէական ատեանի և վճռաջինջ ատեանի (chambre de cassation)։ որոնք նշանակւում են մի տարի ժամանակով։ Քրէական ատեանը կազմւում է 12 երդուեալներից [1])։

Դաշնակցութիւնը բաժանւում է 5 շրջանի, որոնցից իւրաքանչիւրը ունի իւր դաշնակցական քրէական ատեանը, իսկ նիստերի տեղի մասին ամեն անգամ երբ կարիք կայ, որոշւում է, թէ ուր պէտք է լինի։ Քրէական ատեանը բաղկանում է 3 անդամներից և երեք փոխ անդամներից։ Իւրաքանչիւր մի կարգ նիստերի համար դաշնակից ատեանը նախագահ է նշանակում։

Քրէական ատեանում դատւում են դաշնակցութեան պաշտօնեաները, դաւաճանութեան համար կամ դաշնակից իշխանութեան վրայ գործ դրած բռնութիւնների համար։ Ժողովրդի իրաւունքների դէմ կատարած յանցանքները։ Նա է դատում նոյնպէս քաղաքական այն յանցանքները, որոնք պատճառ են եղել խռովութիւնների և դաշնակից ուժի միջամտութեան։ Հասարակաց իրաւունքի վերաբերեալ հարցերը նորա իրաւասութեանն են ենթարկւում, ինչպէս դատաստանական բարձր ատեանի։ Նա է վճռում դաշնակցութեան ու կանտոնների և այլ վերջիններիս իրար մէջ ունեցած վէճերը։ Պաշտպանում է քաղաքացիներին, ապահովելով նրանց իրաւունքները, թոյլ չը տալով, որ խախտեն սահմանադրութեան յօդւածները. իսկ դաշնակից խորհրդի ու դաշնակից ատեանի մէջ ծագած վէճերը ենթարկւում են պարլամէնտի իրաւասութեան։

Այժմ պատրաստւում է նոր պրոէկտ դատաստանական կազմակերպութեան։ Լրագիրները իրանց էջերը լայն բացել են, հիւրընկալելով

---

[1]) Երդուեալ դատաւոր կարող է ընտրւել իւրաքանչիւր մի զուէցերիացի, որը ընտրելու իրաւունք ունէ Դ. Սակմ. զօրութեամբ։ Բացառութիւն են կազմում եկեղեցականները, դատաստանական բոլոր ծառայողները և ոստիկանական պաշտօնեաները, որոնք կարող չեն ոչ ընտրել և ոչ ընտրւել։ Երդուեալ դատաւորները ընտրւում են անմիջապէս ժողովրդից։

հարցին վերաբերեալ յայտնուած կարծիքները և թեր և դէմերը։ Կ'ընդունուի արդեօք նոր կազմուած պրօէկտը, թէ ոչ, հաստատ ոչինչ չի կարելի ասել ի հարկէ, քանի որ դեռ նա կազմուում է. միայն այնքանս կարելի է ասել, որ, կազմելուց յետոյ, պատրաստի պրօէկտը դեռ երկար մամուլի քաւարանում կը քաւէ իւր մեղքերը. իսկ այնտեղից էլ կամ այնքան դիմացկութիւն կ'ունենայ, որ ղուսած լոյս աշխարհ գալով կը մկրտուի ապրելու և կամ մահուան կը դատապարտուի այլ պրօէկտի տեղ տալով։ Ինչն իցէ անցնենք կանտոնական սահմանադրութեան։

D. ԿԱՆՏՈՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Արդի կանտոնները բոլորն էլ անխտիր ռամկապետական կազմութիւն ունեն. այն ինչ հին կանտոններում տեղի ունէր երկու ձևի վարչական կազմութիւն՝ ռամկական հասարակապետութիւն և ազնուական հասարակապետութիւն։

Ռամկական դրուպպային պատկանում էին փոքրիկ կանտոններից մի քանիսը—Շուից, Ուրի, Ունտերվալդէն, Գլարիս, Ապպէնցէլ, որոնց քաղաքական գլխաւոր օրգանը մայիսեան ժողովն էր (Landsgemeinde)։ Այդ կանտոններում օրէնսդրական իշխանութիւնը գտանում էր ուղղակի ժողովրդի ձեռքում, ասել է ամենքը անխտիր մասնակցում էին վարչութեանը հաւասար իրաւունքներով։

Ազնուական հասարակապետութիւններ էին գլխաւորապէս Բէրն և Ցիւրիխ քաղաքները, ուր քաղաքական գլխաւոր օրգանը կազմում էր ազնուականաբար կազմուած փակ ժողովը, նամանաւանդ Բէրնում. իսկ Ցիւրիխում դէր էին խաղում նոյնպէս, բացի բարձր դասակարգից, նաև աբբայութիւնը և բուրժուազիան կամ երրորդ դասակարգը (le tiers état)։

Այս կանտոններին մօտ էին նոյնպէս մի քանի այլ կանտոններ, ինչպէս՝ Սոլէօր (Soleure) և Ֆրիբուրգ աւելի մօտ Բէրնին, և Բազէլ ու Շաֆհաուզէն—Ցիւրիխին։ Վերոյիշեալ բոլոր կանտոններում, գիւղական աշխատաւոր և հասարակ դասը զրկուած էր իրաւունքներից և չէր մասնակցում վարչութեան։ Բոլոր իշխանութիւնը կենտրոնացրել էր բարձր և բուրժուական դասակարգը, ինչպէս և հոգևորականութիւնը իւր ձեռքում։ Բացի վերոյիշեալ գրուպպաներից կային և նուաճուած երկիրներ և դաշնակից քաղաքներ։ Ֆրանսիական մեծ յեղափոխութիւնը վերջ է տալիս իրերի այդ դրութեան, իսկ վիհ բացանելով անցեալի և ներկայի մէջ «մարդու բնական իրաւունքների բացարձակօրէն յայտարարելով», որի հետևանքը եղաւ, ինչպէս յիշեցի առաջին մասում, Հելվետական «հասարակապետութիւնը» իւր սահմանադրութիւնով, որով վերացնում է դասական անհաւասարութիւնը, ճանաչելով բոլոր քաղաքացիներին համահաւասար իրաւունքներով։

Այդ ժամանակից սկսած կազմւում են և գրուպպաներ։ Կանտոններից ոմանք ստանում են անմիջական ռամկական, միացածները ներկայացուցչական ռամկական-հասարակապետական սահմանադրութիւն։ Յօդ. 6. դ. ս. որոշում է այժմ երկու կարգի կանտոնական սահմանադրութիւններ. անմիջական ռամկական, ինչպէս են Ուրի, Ունդէրվալդէններ (ստորին և վերին) և Ապպէնցել (արտաքին և ներքին յօդ. (Rhodes éxtérieurs et Rhodes intérieurs) և Գլարիս։ Այդ կանտոնները մինչ այսօր ունեն մայիսեան ժողովը, ուր կանտոնի բոլոր քաղաքացիները համախմբւած մասնակցում են օրէնսդրական իշխանութեան։ Այդ ընդհանուր ժողովում ընտրում են կանտոնական իշխանութիւնները, գործադիր և օրէնքների պրօէկտներ կազմելու համար, իսկ կազմւած պրօէկտները քննւում և ընդունւում են միմիայն այն ժողովում, բացի մի քանի բացառութիւններից որ կը տեսնենք յետոյ։ Այդ ժողովին է ուրեմն պատկանում ինիցիատիւը և սանկցիան, (sanction)։

Ներկայացուցչական ռամկապետութիւններին պատկանում են միացած միւս կանտոնները շատ չնչին զանազանութիւնով։ Բազէլ (քաղաքը) ունի րէֆէրէնդում բոլոր օրէնքների վերաբերեալ։ Ժընէւը ունի րէֆերէնդում, ինչպէս և Լիւցէրն, Նիւշատէլ, Վօ (canton de Vaud) և Շաֆհաուզէն. Ֆրիբուրգի, Վալէի և Թէսսինի կանտոններում րէֆերենդումը ներկայացուցիչների ժողովին է պատկանում։ Բազէլ (քաղաքը) Սոլէօր (Soleure), Ցիւրիխ, Գրիզոն, Բէրն կանտոններում ժողովրդի անմիջական հաճութիւնը անհրաժեշտ է ներկայացուցիչների ժողովի բոլոր օրինագծների համար։

Երկար կը լինէր այստեղ մի առ մի կանգ առնել իւրաքանչիւր կանտոնի սահմանադրութեան վրայ, ի նկատի ունենալով, որ իւրաքանչիւր մի գրուպպայի կանտոնների սահմանադրութիւնները գրեթէ միեւնոյն են, չատ չնչին տարբերութեամբ. ուստի և ես կը բաւականանամ այստեղ կանգնելու իւրաքանչիւր գրուպպայից մի կանտոնի վերայ, որով գաղափար կարող էք կազմել և միւսների վրայ. Ես կ'առնեմ մի գրուպպայից Ժընէւը։

Ժընէւի կանտոնը ներկայացուցչական ռամկապետութիւն է։ Արդի գործադրող սահմանադրութիւնը գոյութիւն ունի 1879 թւականից։ Բոլոր քաղաքացիները վայելում են հաւասար իրաւունքներ և քսան տարեկանից չափահասեն, ուրեմն և կարող են ընտրել. իսկ ընտրւելու համար պէտք է ունենալ 25 տարեկան հասակ։

Օրէնսդրական իշխանութիւնը պատկանում է բարձր խորհրդին (grand conseil), որի անդամները ընտրւում են կանտոնի քաղաքացիների (citoyen) անմիջական ընդհանուր քւէով։ Օրէնսդրական իշխանութիւնը պատկանում է նոյնպէս բոլոր քաղաքացիներին, որոնք կիրարկում են (l'exercent) այդ իշխանութիւնը՝ թէ սահմանադրական օրէնքները քւէար-

կելով պլէբիսցիտի միջոցով և թէ այլ՝ ոչ սահմանադրական օրէնքները քւարկելով րէֆէրէնդումի միջոցով, որոնք անհրաժեշտեն որևիցէ մի օրէնքի հաստատութեան համար [1]:

II. Գործադիր իշխանութիւնը պետական խորհրդին (conseil d'état) է պատկանում, որի անդամները նոյնպէս ընտրւում են ընդհանուր քւէարկութեամբ (Sufrage univérsel): Պետական խորհուրդը մասնակցում է օրէնսդրական իշխանութեանը և բաժանում նրա հետ ինիցիատիւի իրաւունքը: Նա իրաւունք ունի նոյնպէս պահանջելու, որ բարձր խորհուրդում կազմւած և քւէարկւած որ և է մի պրօէկտ երկրորդ անգամ քննութեան և քւէարկութեան ենթարկւի:

III. Դատաստանական գործերը կատարում են կանտոնական ատեանները (tribunaux):

Կանտոնը բաժանւում է համայնքների, որոնցից իւրաքանչիւրը ունի իւր մունիցիպալական խորհուրդը (conseil municipal), համայնքերէցը (maire) և օգնականներ (adjoints), որոնք ընտրւում են անմիջական քւէարկութեամբ:

I. Բարձր խորհուրդը: Անդամները ընտրւում են 2 տարով: Ամբողջ կանտոնի ընտրողական երեք շրջաններում ընտրել կարող են 20 իսկ ընտրւել 25 տարեկանից. բացառութիւն կազմում են եկեղեցականները, որոնք զրկւած են թէ ընտրելու և թէ ընտրւելու իրաւունքից:

Խորհրդի նիստերը սկսւում են 2 անգամ տարեկան՝ մայիսին և դեկտեմբերին: Նա ունի իւր նախագահը և 2 փոխ նախագահ, որոնց ընտրում է խորհուրդը իւր անդամներից մի տարի ժամանակով: Նիստերը լինում են բաց, հրապարակօրէն:

Բարձր խորհրդի իշխանութիւնը ունի ինիցիատիւի իրաւունք պետական խորհրդի հետ միաքան:

Նա հրաւիրում է պետական խորհրդին ներկայացնելու օրինագծեր. վերջինս պատասխանում է բարձրագոյն խորհրդի կանոնաւոր նիստում

---

[1] Բէրնի կանտոնում օրէնսդրական որ և է մի պրօէկտի հաստատութեան համար անհրաժեշտ է և պարտաւոր ժողովրդի սանկցիան. իսկ Ցիւրիխում ժողովուրդը բացի այդ ունի և ինիցիատիւ. Մացեալ կանտոնները (ներկայացուցչական) նմանում են կամ մէկին կամ միւսին:

[2] Երբ որ և իցէ մի օրինագիծ ընդունւեց և ձևակերպուեց բարձր խորհրդում, ապա այդ օրինագիծը ուղարկւում է պետական խորհրդին՝ հրատարակելու համար: Վերջինս մինչ 6 ամիս ժամանակ կարող է կրկին յետ ուղարկել այդ օրինագիծը իւր նկատողութիւններով: Երբ կրկին անգամ բ. խորհուրդը ուղարկում է՝ հրատարակում է: Հրատարակւած օրինագիծը մինչ 30 օր կարելի է ռեֆերենդումի ենթարկել: Երբ մինչ այդ ժամանակամիջոցը լրանալը ռեֆերենդումը տեղի չ'ունեցաւ կամ քւէարկողների թիւը բաւական չէր, ապա պետական խորհուրդը հաստատում է օրինագիծը:

թէ ինչու ընդունում կամ մերժում է պետական խորհրդի ներկայացրած պրօէկտները։ Նա ունի իր արտաքոյ կարգի նիստերը, ուր իրաւունք ունի միմիայն զբաղուելու այն հարցերով, որոնց համար ժողովուած է։ Նա է քուէարկում հարկերը, որոշած ծախսերը, փոխառութեան քանակութիւնը որոշում։ Նա ստանում և հաստատում է տէրութեան հաշիւը։ Նա է որոշում հասարակական պաշտօնեաների ռոճիկները և որոշում նոցա թիւը։ Ամէն տարի պետական խորհրդից հաշիւ է ստանում վարչութեան բոլոր ճիւղերի մասին, այդ հաշիւը ներկայացնում է առանձին մի մասնաժողովի վերաստուգութեան և քննութեան, որի աւած զեկուցումից յետոյ ապա թէ հաստատում է։

Նրան է պատկանում նոյնպէս քրէական յանցանքների համար ներումն շնորհելը։

Նրան է պատկանում դատարանների պաշտօնեաներին հաստատելը (մի քանի բացառութիւններով)։

Սակայն նորա գերիշխանութիւնը սահմանափակւում է դաշնակցական սահմանադրութիւնով։ Նորա կարողութիւնից վեր է վերաքննելը կամ փոփոխելը կանտոնի սահմանադրութեան, որը ծանրակշիռ հարց է։ Օրէնսդրական կանտոնական իշխանութիւնը (բարձր խորհուրդը) մասնակցում է դաշնակցական օրէնսդրական իշխանութեան և այդ իրաւունք ունենալով՝ մասնակցում է պետութեանց խորհրդի անդամներ նշանակելուն կանտոնի համար։

Պետական խորհուրդը (գործ. իշխանութիւն). բաղկացած է 7 անդամներից, որոնք ընտրւում են 2 տարի ժամանակով ժողովրդի ընդհանուր քուէարկութեան ձայների առաւելութիւնով (իւրաքանչիւր կանդիտատի համար)։

Ընտրւել կարող են միմիայն աշխարհականները 20 տարեկանից։ Միանգամից ընտրւել չեն կարող երկու եղբայրներ, հայր և որդի, պապ և թոռը, և ոչ փեսայ և կնոջ հայրը։ Ոչ մի պետական խորհրդական իրաւունք չ'ունի կրել օտար համազգեստ, ոչ շքանշան, աստիճան կրել կամ թոշակ ստանալ օտար պետութիւնից։ Եթէ նա ստանում է թոշակ կամ որ և է մի աստիճան կամ շքանշան ունէ, ապա ընտրւելուց յետոյ զրկւում է այդ բոլորից։

Պետական խորհուրդը ընտրում է իւր անդամներից մի նախագահ և մի փոխ-նախագահ մի տարի ժամանակով։ Նախագահը երկրորդ անգամ ընտրւել կարող է, երբ յաջորդ տարին նախագահի պաշտօն չէ վարել։

Նա հրատարակում է օրէնքը և հարկաւոր է հաստատութիւն տալիս գործադրութեան համար։ Նորա հսկողութեանն են ենթարկւած կանտոնի ցածր իշխանութիւնները։ Նա հսկում է նոյնպէս դատարանների ճշդութեան։ Ոստիկանական կարևոր կանոններ հաստատում և հսկում ոստիկանութեան։ Նորա իրաւասութեան է ենթարկւած կրթական գործերին

հսկելը։ Երկրի ներքին խաղաղութիւնը պահպանելու համար նա իրաւունք ունի մինչ ութ օր 300 հոգի զօրք պահել. իսկ աւել եթէ կարիք եղաւ պահելու՝ նա պարտաւոր է դիմելու բարձր խորհրդին։

Ամեն տարի զեկուցումն է անում բարձր խորհրդին՝ վարչութեան, բիւջէի, ֆինանսի վերաբերեալ։ Նա է արտաքին յարաբերութիւնների մէջ մտնում, որքան այդ թոյլ է տալիս դաշնակից սահմանադրութիւնը։

Պետական խորհուրդը պատասխանատու է համ-րաշխակի, երբ խախտել է սահմանադրութեան որ և է յօդուածը, գործ է ածել ապօրինի կերպով պատերազմական ուժը և եթէ հարստահարելու բռնութիւն է գործ դրել, ի չար գործ ածելով իշխանութիւնը մասնաւոր անհատների դէմ։

Դատի ենթարկել կարող են թէ պետական խորհրդին և թէ իւրաքանչիւր անդամին առանձին, իւրաքանչիւր քաղաքացի, որի իրաւունքները բռնաբարուած կամ խախտուած են և կամ ընդհանուր պրօկուրորը։ Երբ դատարանի են ենթարկուած բոլոր անդամները, ապա ատեանը կազմւում է 36 երդուեալներից. իսկ երբ իւրաքանչիւր անդամը առանձին, այդ դէպքում 12 երդուեալներից է կազմւում ատեանը։ Պարզ է, որ նման մի սիստեմով, ուր իւրաքանչիւր քաղաքացի իրաւունք ունի դատարանի առաջ և ինչպէս մեզանում ասում են քարշ տալու վարչական այն պաշտօնեաներին և նոյն իսկ եթէ լաւ ինկատի ունենաք որ ամբողջ վարչութիւնը պատասխանատուութեան է ենթարկւում, կրկնում եմ այդ տեսակ սկզբունքներով վարուող վարչութիւնը ոչ մի անօրինութիւն չի կարող կատարել. իսկ մի այլ կողմից, եթէ լաւ նայենք, պաշտօնեան իւր պաշտօնից զրկուել չի կարող նոյն իսկ բարձր իշխանութիւնից, մինչ դատարանով չը հաստատուեն նորա կատարած չարագործութիւնները և կատարած կեղծումները [1]։ Այդ տեսակ մի հանգամանքում պաշտօնեաները, ակներև է, որ կախում չ'ունեին այս կամ այն բարձր իշխանութեան կապրիզներից, որոնց ետևից ոչխարների ջոկերի նման ընթանում են շատ տեղերում. ինչ և իցէ։

Ընտրողութիւնները։ Դաշնակցական խնդիրներում իւրաքանչիւր քաղաքացի ինչպէս տեսանք վերը՝ առաջին գլխում, 20 տարեկանից չափահաս է. իսկ կանտոնական հարցերում, իւրաքանչիւր ժընէւցի 20 տարեկանից իրաւունք ունի. այդ իրաւունքը ունին և միւս կանտոնների քաղաքացիները, որոնք ապրում են մի տարից ի վեր կամ հաստատուել են (բնակութիւն են հաստատել) երեք ամսից ի վեր։ Ոչ ոք կարող չէ մի համայնքից աւելի ուրիշ համայնքում ընտրել. իւրաքանչիւրը իրաւունք ունի ընտրել այն համայնքում, ուր բնակւում է։ Ցանցաւորները, որոնք

---

[1]) Բէրնում որ և իցէ մի պաշտօնեայ իւր պաշտօնից զրկուել կարող է լոկ ժամանակաւորապէս մինչ դատարանի վճիռը (յօդուած 18):

դատուած են, զրկուում են ընտրողական իրաւունքից. որոնք քաղաքական յանցանքների համար են դատապարտուած, կարող չեն ընտրել, մինչ ժամանակամիջոցը լրանալուց յետոյ երեք տարի անց, իսկ մնացեալ յանցաւորները մինչ դատարանի որոշած ժամանակը լրանալը։

Պէտք է նկատած, որ իւրաքանչիւր մի զուիցերիացի պէտք է անպատճառ պատկանէ որ և իցէ մի համայնքի, առանց որին նա քաղաքացիական իրաւունքներ չէ վայելում։ Եթէ լաւ նայելու լինենք, իսկապէս դաշնակցութեան կամ կանտոնի քաղաքացիներ չը կան, այլ կան այսպէս ասած համայնքների քաղաքացիներ, իսկ ով համայնքի քաղաքացի է, նաև կանտոնի և թէ դաշնակցութեան քաղաքացին է, այնպէս որ համայնքների ներկայացուցիչներն են դտանում կանտոնի վարչութեանց մէջ. ուրեմն ասել է, ով համայնքի չէ պատկանում, ուրեմն և ընտրողական իրաւունք չ'ունէ։ Օրինակ՝ հայմաթլողները։ Իւրաքանչիւր քաղաքացի արձանագրուած է այն համայնքներում, ուր գտանում է նորա իրական բնակութիւնը (domicile réél)։ Ներքին գործերի դէպարտամէնտը ունի երկու մատեան, որոնցից մէկում գրում են իւրաքանչիւր մի համայնքում ապրող զուիցերացիներ.ը մէկում արձանագրում են այն քաղաքացիների անունները, որոնք իրաւունք ունին լոկ դաշնակցական քէարկութեան. իսկ միւսում նոցա անունները, որոնք իրաւունք ունին կանտոնական քէարկութեան։ Այդ մատեանները ի նկատի առած՝ պետական խորհուրդը իւրաքանչիւր տարուայ սկզբին կանտոնի ընտրողների ցուցակն է կազմում, իւրաքանչիւր համայնքի համար առանձին, որոնք տպագրելով ուղարկուում են բոլոր համայնքներին։ Առանձին մի մասնաժողովից և մունիցիպալ խորհրդից ընտրուած ներկայացուցիչներից (իւրաքանչիւր համայնք ընտրում է համեմատ աղգարնակութեան) ընտրողութիւնից 6 օր առաջ ստուգում են ցուցակները և հաստատելուց յետոյ՝ կախում են մի օր առաջ միւս ցուցակների մօտ և այդ ցուցակների վրայ արձանագրուածները լոկ իրաւունք ունին ընտրելու։

Ամբողջ կանտոնը բաժանուած է 24 ընտրողական շրջանների։ Այդ շրջանները հաւաքւում են իւրաքանչիւր 3 տարին մի անդամ հոկտեմբերի վերջին կիւրակի օրը ընտրելու աղգային ժողովի 5 անդամներին։

Բարձր խորհրդի անդամներ ընտրելու համար հաւաքւում են երկու տարին մի անդամ, իւրաքանչիւրը իւր շրջանում (24 շրջաններից մէկում)։ իսկ քէանամար անում է երեք շրջաններում. օրինակ, Ժընէվ քաղաքը կազմում է մի շրջան, Ռոնալի աջ ափը երկրորդ, իսկ ձախը երրորդ։

Պետական խորհրդի ընտրութեան համար բոլորեքեան, որոնք իրաւունք ունեն ընտրելու, հաւաքւում են Ժընէվ, իւրաքանչիւր 2 տարին մի անդամ նոյեմբերի առաջին կիսում։ Ամբողջ կանտոնը ինչպէս ասացի, բաժանուած է համայնքների, Ժընէվ քաղաքը կազմում է համայնքներից մէկը։

իւրաքանչիւր համայնք ունի իւր մունիցիպալական խորհուրդը (conseil municipal), որի անդամները ընտրւում են համայնքի բոլոր ընտրողներից. ունի իւր համայնքներէցը (maire) և օգնականներ (adjoints), որոնց նոյնպէս ընտրում են համայնքի ընտրողները։ Համայնական խորհուրդը, համայնքերէցը և օգնականները կազմում են համայնքի վարչական մարմինը։ Ժընեւ քաղաքում համայնքերէցի և իւր օգնականների փոխարէն կայ վարչական խորհուրդ (conseil administratif) հինգ անդամներից բաղկացած։

Համայնական ընտրողութեան իրաւունք ունեն այն ժընեւացիք որոնք ծնուել և ապրում են համայնքում, կամ ապրում են մի տարուց ի վեր. իսկ միւս զւիցերիացիներից նոքա, որոնք հաստատուել են 3 ամսից ի վեր։

Համայնական խորհուրդը բաղկացած է 7—18 անդամներից. նայած համայնքի բնակիչների թւին։ Ժընեւ քաղաքի խորհուրդը բաղկանում է 41 անդամներից։ Ով ընտրելու իրաւունք ունի, կարող է և ընտրուել. ոչ ոք միանգամից կարող չէ պատկանել համայնական երկու խորհրդի։ Պետական խորհրդականները, եկեղեցականները, համայնքի եկամուտների հաշուակալը, համայնքից վարձք ստացող ծառայողները ընտրուել կարող չեն։

Հայր և որդի կարող չեն միևնոյն ժամանակ համայնքների օգնական կամ խորհրդական լինել։ Համայնքի խորհուրդում երկու եղբայրներից աւել չեն կարող լինել։

Համայնքի վարչական մարմնի անդամները ընտրւում են 4 տարով և փոխւում կամ նորից ընտրւում են միանգամից։

Խորհուրդը ունի իւր կանոնաւոր նիստերը, որոնք սկսւում են տարեկան 2 անգամ։ Նիստերը ունեն։ Խորհուրդը նշանակում է մի նախագահ, մի փոխ նախագահ և մի քարտուղար։ Գործերը վճռւում են ձայների առաւելութիւնով։ Ժընեւի և Կորուժի համայնական խորհուրդը հաստատում է իւր ներքին կանոնադրութիւնները. իսկ միւս համայնքների խորհուրդի հաստատուելը կարօտ է պետական խորհրդի հաւանութեան։

Խորհուրդը հաստատում է համայնքների պատրաստած տարեկան բիւջէն (Ժընեւում վարչական խորհուրդն է կազմում). նախ հաստատում բիւջէից դուրս ծախքերը, համայնքների կամ վարչական խորհրդի տարեկան հաշիւը։ Համայնական ստացուածքների կառավարելու ձևը և այդ ստացուածքներից օգտուելը, նրանց պահպանելը և բարելաւելու միջոցները որոշում։ Անշարժ կալքերի փոխանցումն (aliénation), փոխելը, բաժանելը և ստացուածքի ձեռք բերելը հաստատում։ Համայնքին արած պարգևները և կտակները հաստատում։ Համայնքի շինութիւնների պրօեկտը կամ շինուածքների քանդելը խորհուրդն է հաստատում, ինչպէս և նոր ուղի, փողոց, ճանապարհներ անցկացնելը և կամ յօգուտ ընդհանուրի սեփականում մաս-

նուր ստացուածքներ։ Գիւղական համայնքներում, խորհուրդը, բացի այդ, հոգատարում է ճանապարհների պահպանութեան համար կարեւոր աշխատութիւնները։ Նա հոգատարում է նոյնպէս տեղական հարկերը։ Եթէ միջակին ծախսերը եկամուտները չեն ծածկում (միջակին), ապա խորհուրդը կարող է արտաքոյ կարգի հարկեր նշանակել։

Համայնական խորհուրդի բոլոր վճիռները իրագործելի են. միայն նրա հաստատած տարեկան բիւջէն և այն արտաքոյ կարգի ծախսերը, որոնց նա որոշում է և բիւջէի $^{1}/_{10}$-ից աւելի են, կարօտ է պետական խորհրդի վերահաստատութեան, ինչպէս և համայնքի ստացուածքների փոխանցումն, անշարժ կալուածի բաժանումն և այդ ստացուածքների վերաբերեալ դատաստանական բոլոր գործողութիւնները. իսկ կապալի համար, եթէ 9 տարից աւելի ժամանակամիջոցով է տրւում, նոյնպէս անհրաժեշտ է պետական խորհրդի հաստատութիւնը։ Պետական խորհուրդն է նոյնպէս վերահաստատում յօգուտ ընդհանուրի սեփականումն, տարեկան այն հարկերը, որոնք սովորական եկամուտներից աւելի են և եթէ այդ եկամուտները որոշուած են գիւղական համայնքների վերակացուների, տարրական ուսումնարանների պաշտօնեաների ռոճիկների համար, ճանապարհների, ուղիների պահպանութեան, հրշէջ գործիքների նորոգման համար և այլն։ Պետական խորհուրդը ոչնչացնում է այն վճիռները, որոնք կայացել են ապօրինի խորհրդում (եթէ մեծ բազմութիւնը ներկայ չէ և կամ խորհրդի անդամներից նրանք, որոնք որեւիցէ շահ ունեն այդ վճռից ներկայ են եղել)։ Համայնքները, եթէ գտնում են, որ իրանց իրաւունքները խախտուած են պետական խորհրդի որեւէ մի կարգադրութեամբ, ապա այդ կարգադրութիւնների համար ամսուայ ընթացքում կարող են դիմել բարձր խորհրդին, հարցը քննելու. և եթէ բարձր խորհուրդը յանձնում է մի առանձին մասնաժողովի քննութեան, ապա համայնքը կարող է ունենալ իւր երկու ներկայացուցիչները մասնաժողովի անդամների թւում։ Գործադիր իշխանութիւնը պատկանում է համայնքի երէցին և օգնականներին, որոնց նշանակում են համայնքի բնակիչները ընդհանուր քուէով, 4 տարի ժամանակամիջոցով։ Ընտրուել կարող են 25 տարեկանից համայնքի բոլոր բնակիչները, իսկ ընտրել՝ 20 տարեկանից։ Ընտրուել կարող չեն տարրական ուսումնարանների այն պաշտօնեաները, որոնց ռոճիկը մասամբ կամ ամբողջովին համայնքն է վճարում։ Համայնքերէցը և օգնականները մասնակցում են համայնական խորհրդին։ Նրանք, ինչպէս և միւս խորհրդականները իրաւունք չունեն մասնակցելու, երբ վճռելու հարցը վերաբերում է դոցա ազգականներին [1]։

Համայնքերէցը հսկում է համայնքի վերակացուներին (gardes ruraux),

---

[1] Խնամութեան առաջն առնելու համար։

ստանում համայնքին արած բոլոր պարգևները և կտակները (անշարժ կալքերին վերաբերեալ). հսկում է համայնքի ներքին խաղաղութեան. նա կարող է կալանաւորել համայնքի անդամներին, որոնք բռնութիւն են գործ գնում ժողովրդի պաշտօնեաների և նրա իրաւունքի ներկայացուցիչների վերայ. միայն թէ նախօրէն ընդհանուր պրոկուրորի կարգադրութիւնը ստանալով, իսկ առանց այդ նա կարող չէ։ Համայնքերէցը և թէ օգնականները պատասխանատու են։

Ծընէ. քաղաքի գործադիր իշխանութիւնը վարչական խորհուրդն է. սակայն նա, վարչական խորհուրդը (5 անդամներից բաղկացած և ժողովրդի անմիջական քուէով ընտրուած), ինչպէս համայնքի համայնքերէցը, ոստիկանական գործերով չի զբաղւում։ Մի կողմ թողնելով առաջիմ համայնքի վրայ աւելի խօսելը, որի վրայ կանգ կ'առնեմ փոքր ինչ յետոյ, ես կ'անցնեմ կանոնական դատաստանական գործերի մասին մի քանի խօսք ասելու։

(Կը շարունակուի)